

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ**

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՄՇԱԿԿԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԱՌԸՆԹԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իշխանության ճյուղերի լիազորությունների հավասարակշռումը կատարելագործելու, հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի հունվարի 31-ի ՆՀ-269-Ն հրամանագրով ձևավորվեց Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության սահմանադրական պատմությունը, հաշվի առնելով առկա մարտահրավերներն ու հիմնախնդիրները, ուսումնասիրել է Արցախի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների անցած փուլերը.

Առաջին փուլ (1991-2006 թվականներ).

Կազմավորման պահից ի վեր, ավելի քան 15 տարի, Արցախի Հանրապետությունն ապրել է առանց Սահմանադրության, բայց հանրաճանաչ սահմանադրական արժեքներով ու սկզբունքներով: Այդ մասին են վկայում կարևորագույն մի շարք իրավական փաստաթղթերում, մասնավորապես, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» հռչակագրերում, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական օրենքում ամրագրված կարգավորումները: Վերոգրյալ իրավական փաստաթղթերը բազմանպատակ ու համալիր բնույթ են կրել՝ հանդես գալով որպես սահմանադրական գործընթացների կարևորագույն հիմք:

Բացի վերը նշված իրավական փաստաթղթերից, մինչև Հիմնական օրենքի ընդունումը, սահմանադրաիրավական զարգացումներին համընթաց, մեր երկրում ընդունվել են սահմանադրաիրավական հարաբերությունները կանոնակարգող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

խորհրդարանի մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական իշխանության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքները, որոնք հիմք են հանդիսացել և նախադրյալներ են ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության ընդունման համար:

Երկրորդ փուլ (2006-2017 թվականներ).

2006 թվականի դեկտեմբերի 10-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունն ամփոփել է նախորդ տարիների իրավաքաղաքական կարգավորումները՝ անհերքելի դերակատարություն ունենալով ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետականության ամրապնդման, սահմանադրաիրավական մի շարք ինստիտուտների կայացման, իրավական ու ժողովրդավարական կառուցակարգերի հաստատման գործում:

Այդուհանդերձ, հանրային կյանքի նոր իրողությունները, սահմանադրական նորմերի կիրառման պրակտիկան, կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակը, անմիջական ժողովրդավարության ինստիտուտների կատարելագործման խնդիրները թելադրեցին սահմանադրական բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ դառնալով հանրային լայն քննարկումների առարկա:

Սահմանադրական զարգացումների այս փուլում փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված էր հետևյալ հիմնախնդիրները հաղթահարելու անհրաժեշտությամբ.

1. Հետամուտ լինելով մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում հիմնաքարային հանդիսացող ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից արդեն իսկ վավերացված միջազգային իրավական պայմանագրերում ամրագրված հիմնադրույթներին՝ *անհրաժեշտ էր ընդլայնել Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների շրջանակը՝ միաժամանակ հստակ*

սահմանելով հիմնական իրավունքների սահմանափակման միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերը:

2. Անհրաժեշտ էր տարանջատել մի կողմից՝ «դասական» և սոցիալական հիմնական իրավունքների, մյուս կողմից՝ պետության քաղաքականության հիմնական նպատակները:

*3. Իշխանությունների տարանջատման սկզբունքին համահունչ, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առջև ծառայած խնդիրներն արդյունավետ լուծելու, կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, կառավարման համակարգը փակուղային իրավիճակներում հայտնվելուց զերծ պահելու նպատակով, *անհրաժեշտ էր միմյանց հակակշիռ, հավասարակշռված օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների բնականոն գործունեության համար հստակեցնել իշխանության երեք թևերի գործառնական լիազորությունները, ամրապնդել արդյունավետ հակակշիռների ու զսպումների համակարգը:**

*4. Անհրաժեշտ էր ամրապնդել անկախ, արհեստավարժ, հաշվետու դատական իշխանության հիմքերը՝ իրավունքի գերակայության, օրինականության և մարդու իրավունքների պաշտպանվածության ապահովման նպատակադրությամբ: Միաժամանակ, *անհրաժեշտ էր ավելի հստակեցնել դատարանների անկախության, ինքնուրույնության, դատավորի կարգավիճակի սահմանադրական երաշխիքները:**

5. Անհրաժեշտ էր հստակեցնել տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական կարգավիճակը, լիազորությունները:

*6. Վերոգրյալից բացի, *անհրաժեշտ էր նաև հստակեցնել Սահմանադրությամբ ամրագրված մի շարք կարգավորումներ, ինչպես նաև վերացնել Սահմանադրությունում առկա ներքին հակասությունները:**

Երրորդ փուլ (2017 թվականից հետո).

Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրությունը կոչված էր շարունակելու Լեոնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի Սահմանադրության ձևավորած ավանդույթները և որակական նոր մակարդակի հասցնելու Արցախի ժողովրդի առաջադրած նպատակները՝ ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետություն զարգացնելու

հեռանկարով: Այդ նպատակների մեջ գերակայում էին անկախ պետականությունը պաշտպանելու և ամրապնդելու, ժողովրդի ու երկրի անվտանգությունն ապահովելու և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանը հետամուտ լինելու գաղափարները:

Հանրաքվեի միջոցով իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում կառավարման կիսանախագահական համակարգից, զինադադարի մշտական խախտումների և լայնածավալ պատերազմի ակնհայտ վտանգի պայմանները հաշվի առնելով, անցում կատարվեց կառավարման նախագահական համակարգի: Կառավարման համակարգի փոփոխությամբ պայմանավորված առաջացել էր խորհրդարանի դերի բարձրացման միջոցով իշխանության թևերի հավասարակշռությունը պահելու խնդիրը, որի լուծման համար առաջարկված զսպումների ու հակակշիռների մեխանիզմները հանգեցրին իշխանության թևերի միջև կոշտ կախվածության կարգավորումների: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հենց այդ կարգավորումներն էլ հիմք հանդիսացան 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողություններից հետո պետական կառավարման համակարգի կազմալուծումից խուսափելու համար:

Այդուհանդերձ, Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավական նորմերը բավարար չեղան լիարժեք լուծումներ տալու Արցախի Հանրապետությանը պարտադրված պատերազմում և հետպատերազմյան շրջանում առաջացած հիմնախնդիրներին: Ինչպես պատերազմական գործողությունների ընթացքում, այնպես էլ հետպատերազմյան ժամանակաշրջանում ակներև դարձան կառավարման նախագահական համակարգի թերությունները, որոնք վերացնելու նպատակով առաջացավ սահմանադրական բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն: Կառավարման համակարգը վերափոխելուց և դրանով պայմանավորված անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց զատ՝ Արցախի Հանրապետության գործող Սահմանադրության մի շարք իրավակարգավորումներ ևս ունեն վերանայման կարիք:

Առկա սահմանադրաիրավական խնդիրների լուծմանն ուղղված հայեցակարգային մոտեցումները մանրամասնված են սույն Հայեցակարգի համապատասխան գլուխներում:

ԳԼՈՒԽ 1
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2017 թվականի փետրվարի 20-ի Արցախի Հանրապետության Սահմանադրության ընդունման արդյունքում համալրվել է հիմնական իրավունքների ցանկը՝ դրանով իսկ ընդլայնելով ու ամրապնդելով մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակը: Նախատեսվել են նաև մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման՝ միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերը:

Բայցևայնպես, Արցախի Հանրապետությունում առկա սահմանադրական զարգացումները, ներկայիս մարտահրավերներն ու սպառնալիքները, հիմք են հանդիսանում գործող Սահմանադրությունում մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակին առնչվող իրավակարգավորումները վերանայելու համար:

ՔԱՂԱՔԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Պետք է նշենք, որ ո՛չ 2006 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ո՛չ էլ 2017 թվականի Արցախի Հանրապետության Սահմանադրություններով անդրադարձ չի կատարվել երկքաղաքացիությանը (կրկնակի քաղաքացիությանը): Ընդ որում, Սահմանադրությամբ նախատեսված չլինելը երկքաղաքացիությունն (կրկնակի քաղաքացիությունն) Արցախի Հանրապետությունում բացառելու հիմք չեն: Այդ մասին են վկայում կազմավորման պահից ի վեր Արցախի Հանրապետությունում ընդունված իրավական ակտերը, որոնցով մանրամասնվել են երկքաղաքացիության (կրկնակի քաղաքացիության) հետ կապված հարաբերությունները: Այսպես, դեռևս 1992 թվականի հունվարի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին» հռչակագրով սահմանվեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թույլատրվում է *երկակի քաղաքացիություն*: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանվեց, որ *կրկնակի քաղաքացիության* ձեռքբերման կարգը և հիմքը կարգավորվում է այլ պետությունների հետ պայմանագրերով: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով էլ կարգավորվեցին կրկնակի քաղաքացիության հետ կապված հարաբերությունները, մասնավորապես, սահմանվեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացին կարող է միաժամանակ հանդիսանալ այլ պետության /այլ պետությունների/ քաղաքացի կամ օտարահպատակ և կատարել այլ պետության /այլ պետությունների/ քաղաքացու կամ օտարահպատակի պարտականությունները՝ ... օրենքին համապատասխան, եթե դա նախատեսված է կողմերի միջև կնքված միջազգային իրավական ակտերով:

Հաշվի առնելով Արցախի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ ամրագրված իրավակարգավորումները, ինչպես նաև Արցախի Հանրապետության քաղաքացիների համար գործնականում այդ իրավունքի իրացման սահմանադրաիրավական հիմքերի ամրագրման նպատակով՝ առաջարկվում է երկքաղաքացիության (կրկնակի քաղաքացիության) հետ կապված հարաբերությունները կանոնակարգել սահմանադրական մակարդակով՝ Սահմանադրությունում ամրագրելով հետևյալը.

«Արցախի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, Արցախի Հանրապետության օրենքներին և (կամ) միջազգային պայմանագրերին համապատասխան, կարող է ունենալ այլ պետության քաղաքացիություն»:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում, հասարակության տնտեսական հարաբերությունների հիմքում ընկած է սեփականությունը: Այդ է պատճառը, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխի 10-րդ հոդվածով սահմանվում է, որ Արցախի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Միաժամանակ, հենվելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (17-րդ հոդված), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության

(1-ին հոդված) վրա, Արցախի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք (60-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընդ որում, սեփականության իրավունքը բացարձակ իրավունք չէ: Այն ենթակա է որոշակի սահմանափակումների: Այսպես, յուրաքանչյուր անձի սեփականության իրավունքն ամրագրելու հետ մեկտեղ Արցախի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է, որ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի (60-րդ հոդվածի 6-րդ մաս):

Ելնելով Արցախի Հանրապետության անվտանգության նկատառումներից՝ առաջարկվում է վերանայել սեփականության իրավունքի՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված սահմանափակումները, մասնավորապես, ամրագրելով հետևյալ կարգավորումը.

«Անշարժ գույքի նկատմամբ, այդ թվում՝ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հավաքների ազատությունը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության կայացման, հասարակության անդամի կողմից հանրության շրջանում իր կարծիքն ազատորեն արտահայտելու, հանրային կարծիքի ձևավորման գործընթացին մասնակցելու և ժողովրդաիշխանության իրականացման անհրաժեշտ նախապայման, առանցքային նշանակություն ունի ժողովրդավարական, իրավական պետության համար:

Հավաքների ազատության իրավունքի իրականացման իրական երաշխիքների ապահովումը պահանջում է այնպիսի մոտեցում, որ մի կողմից ստեղծվեն ժողովրդավարական պետությունում հավաքների ազատության իրավունքի իրականացման անհրաժեշտ պայմաններ, մյուս կողմից՝ արդյունավետորեն

արձագանքվեն ժողովրդավարական պետության և ողջ հասարակության կայունության ու անվտանգության այն բոլոր սպառնալիքները, որոնք կարող են առաջանալ հավաքների ազատության իրավունքի չարաշահման պայմաններում:

Հավաքների ազատության իրավունքը, դասվելով քաղաքական իրավունքների շարքին, բացարձակ բնույթ չի կրում: Այսպես, Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանվում է, որ օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ (44-րդ հոդվածի 3-րդ մաս):

Հաշվի առնելով Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ներկայիս իրավիճակը, ելնելով Արցախի Հանրապետության պետական անվտանգության, հասարակական կարգի պաշտպանության նկատառումներից, առաջարկվում է *խաղաղ, առանց զենքի հավաքներ կազմակերպելու իրավունքը վերապահել միայն Արցախի Հանրապետության քաղաքացիներին:*

ԳԼՈՒԽ 2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արցախի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Սահմանադրական այս կարգավորումից հետևում է, որ պետական իշխանությունը միասնական է, բայց դրա գործառույթները՝ հասարակական հարաբերությունների օրենսդրորեն կանոնակարգում, կառավարում և արդարադատություն, իրականացնում են տարբեր մարմիններ՝ Սահմանադրությամբ և օրենքներով օժտվելով համարժեք լիազորությամբ: Իշխանությունների բաժանումը նշանակում է պետական գործառույթների սահմանազատում, ընդ որում, այդ գործառույթներն իրականացվում են միանգամայն ինքնուրույն մարմինների կողմից, որոնք գործում են օրենքի կարգավորումներին համապատասխան:

Իշխանությունների բաժանման սահմանադրական համակարգը պետք է ապահովի իշխանության ճյուղերի հավասարակշռումը, ինչպես նաև սահմանադրական համակարգում յուրաքանչյուր իշխանությունը մյուս երկու իշխանությունների կողմից զսպելու իրավական ընթացակարգի նախատեսումը, այսինքն՝ այլ իշխանությունների համար փոխադարձ հավասարակշռելիության լծակների ամրագրումը: Ընդ որում, իշխանությունների տարանջատումն առկա է միայն այնտեղ, ուր նախատեսված են իրավական միջոցներ իշխանության բոլոր թևերի փոխադարձ հակակշռման համար:

Արցախի Հանրապետության գործող Սահմանադրությամբ նախատեսված է իշխանությունների բաժանման և հավասարակշռման հետևյալ ընթացակարգը.

Արցախի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ գործադիր իշխանության ղեկավարը Հանրապետության Նախագահն է (87-րդ հոդվածի 2-րդ մաս): Կառավարությունը Հանրապետության Նախագահի լիազորությունների իրականացմանը աջակցող գործադիր իշխանության կոլեգիալ մարմինն է (101-րդ հոդվածի 1-ին մաս):

Կառավարությունը կազմված է պետական նախարարից և նախարարներից (102-րդ հոդվածի 1-ին մաս), որոնց նշանակում և ազատում է Հանրապետության Նախագահը (93-րդ հոդվածի 4-րդ կետ):

Կառավարության կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Հանրապետության Նախագահը հրապարակում է իր ծրագիրը (104-րդ հոդված): Ընդ որում, Հանրապետության Նախագահին Ազգային ժողովի նիստում ամենամյա հաղորդում է ներկայացնում նախորդ տարվա ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև հաջորդ տարվա ծրագրի վերաբերյալ (93-րդ հոդվածի 17-րդ կետ):

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի *ընտրություններն* անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ (7-րդ հոդված): Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի ընտրությունների հետ *միաժամանակ* (109-րդ հոդված):

Հանրապետության Նախագահի հրաժարականի, մահվան, լիազորությունների դադարեցման կամ նրան անվստահություն հայտնելու, պաշտոնանկ անելու, ինչպես նաև Ազգային ժողովը արձակվելու դեպքերում նշանակվում են *Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ* (90-րդ հոդված):

Ընդ որում, *Հանրապետության Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը՝* բացառությամբ Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում ընկած ժամանակահատվածի, պատերազմի և արտակարգ դրության ժամանակ, ինչպես նաև այն դեպքի, երբ ռազմական դրության ժամանակ հրամանագիր է ընդունել ընտրություններ չանցկացնելու վերաբերյալ (94-րդ հոդվածի 11-րդ կետ): Որպես հակակշիռ *Ազգային ժողովը.*

1) *կարող է անվստահություն հայտնել Հանրապետության Նախագահին* (96-րդ հոդվածի 1-ին մաս),

2) *կարող է պաշտոնանկ անել Հանրապետության Նախագահին պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար* (97-րդ հոդվածի 1-ին մաս),

3) Արցախի Հանրապետության Սահմանադրության 99-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում Գերագույն դատարանի եզրակացության հիման վրա, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ *որոշում է կայացնում Հանրապետության Նախագահի լիազորությունները դադարեցնելու մասին:*

Գործող Սահմանադրությամբ կարգավորված են նաև Հանրապետության Նախագահի հրաժարականի հետ կապված հարաբերությունները: Այսպես, *Հանրապետության Նախագահին իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով*: Հրաժարականը ուժի մեջ է մտնում եռօրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով այն հրապարակելու պահից (98-րդ հոդված):

Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հանրապետության Նախագահին իր ամբողջ պաշտոնավարման ընթացքում գործադիր իշխանության համար կրում է անհատական պատասխանատվություն: Գործադիր իշխանությունն իրականացվում է մեկ կենտրոնի՝ Հանրապետության Նախագահի կողմից: Հանդիսանալով Արցախի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավոր՝ նրա ձեռքում է կենտրոնացած ամբողջ գործադիր իշխանությունը: Նա է զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը (94-րդ հոդվածի 2-րդ մաս), Անվտանգության խորհրդի նախագահը (94-րդ հոդվածի 4-րդ մաս), նա է ղեկավարում պետության ներքին և արտաքին քաղաքականությունը (93-րդ հոդվածի 1-ին կետ), իրականացնում պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը (93-րդ հոդվածի 2-րդ կետ):

Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ներկայիս պայմաններում բավականին վտանգավոր և չափազանց ռիսկային է իշխանության գերկենտրոնացումը մեկ անձի՝ Հանրապետության Նախագահի ձեռքում:

Հաշվի առնելով Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված իրավական գործընթացների կենսագործման տեսական հնարավորությունը, մասնավորապես, Հանրապետության Նախագահի պաշտոնն Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված հիմքերով թափուր մնալու հավանականությունը, առաջ է գալիս իրավաքաղաքական ճգնաժամի վտանգ: Այսպես, Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտիր Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, արգելվում է արձակել Ազգային ժողովը, նշանակել հանրաքվե, նշանակել կամ ազատել Կառավարության անդամներին, զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական

կազմը (100-րդ հոդված): Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, հաշվի առնելով Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից լիազորությունների միաժամանակյա ստանձնումը, նախատեսված է Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում (Հանրապետության Նախագահի հրաժարականի, մահվան, լիազորությունների դադարեցման կամ նրան անվստահություն հայտնելու, պաշտոնանկ անելու) Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ նշանակելու պահանջը (90-րդ հոդված): Նույն մեխանիզմը գործում է նաև Ազգային ժողովի արձակման դեպքում: Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված իրավական ընթացակարգերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մինչև արտահերթ ընտրությունների անցկացումը և ընտրությունների արդյունքներով գործադիր իշխանության ղեկավար ու խորհրդարան կազմավորելը, պետական կառավարման համակարգը լիարժեք չի գործում, գործադիր իշխանությունը Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում «կաթվածահար է» լինում, պարարտ հող է նախապատրաստվում սահմանադրական ճգնաժամերի համար:

Ուստի, հաշվի առնելով Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման հրամայականը, ներկայումս Արցախի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերները, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում, արտակարգ իրավիճակներում պետական կառավարման համակարգի ճկունությունն ապահովելու նպատակով՝ առաջարկվում է վերափոխել կառավարման համակարգը՝ անցում կատարելով կառավարման կիսանախագահական համակարգին:

Կառավարման կիսանախագահական համակարգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հենվում է երկու կենտրոնների՝ Հանրապետության Նախագահի և խորհրդարանի վստահությունը վայելող վարչապետի վրա: Կառավարման կիսանախագահական համակարգի պայմաններում հնարավոր է սահմանադրական մակարդակով ապահովել կառավարման համակարգի ճկունությունը ճգնաժամային իրավիճակներում: Այսպես, կիսանախագահական կառավարման համակարգի դեպքում գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը, որի գործունեությունը ղեկավարում, ինչպես նաև կառավարության

անդամների աշխատանքը համակարգում է վարչապետը: Նախագահը, հանդիսանալով Արցախի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավոր, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, Անվտանգության խորհրդի նախագահը:

Արցախի Հանրապետությունում առանձնահատուկ կարևորություն ունեն անվտանգության բնագավառում Հանրապետության Նախագահի լիազորությունները: Այսպես, Արցախի Հանրապետության Սահմանադրության 94-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ազգային անվտանգության բնագավառում իր լիազորությունների իրականացմանն աջակցելու նպատակով Հանրապետության Նախագահն իրեն կից ձևավորում է խորհրդակցական մարմին՝ *Անվտանգության խորհուրդ*, և նախագահում այն: Պետք է նշենք, որ Անվտանգության խորհուրդը, Հանրապետության Նախագահի՝ որպես երկրի անվտանգության երաշխավորի, գործառույթների իրականացմանն աջակցող մարմին, ունի բացառիկ կարևոր նշանակություն: Անվտանգության խորհուրդը միակ խորհրդակցական սահմանադրական մարմինն է, որը Հանրապետության Նախագահը Սահմանադրության ուժով պարտավոր է կազմավորել և նախագահել: Գործող իրավակարգավորումների համաձայն՝ Անվտանգության խորհուրդը մշտապես գործող խորհրդակցական մարմին է: Հաշվի առնելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ժամանակ, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում ազգային անվտանգության բնագավառում առկա իրավաքաղաքական հիմնախնդիրները, առաջարկվում է *Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ անդրադառնալ Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակին, մասնավորապես, վերանայել Անվտանգության խորհրդի խորհրդակցական բնույթը, սահմանել Անվտանգության խորհրդի գործունեության հիմնական նպատակները, լիազորությունները, ինչպես նաև ամրագրել, որ Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:*

Կառավարման կիսանախագահական համակարգի դեպքում, խորհրդարանը մասնակցում է կառավարության ձևավորմանը, մասնավորապես, կառավարության կառուցվածքը, կառավարության առաջարկությամբ, սահմանվում է օրենքով:

Գործող Սահմադրությամբ, որպես խորհրդարանի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության արդյունավետ միջոց, ամրագրված է *հարցապնդման* ինստիտուտը, որն իրականացվում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից: Ի լրումն գործող իրավակարգավորումների՝ առաջարկվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանել, որ *հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը Հանրապետության Նախագահին կարող է առաջարկել քննարկել կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:*

Պետք է նշենք, որ կառավարման կիսանախագահական համակարգին անցում կատարելու արդյունքում անհրաժեշտ է լինելու վերանայել ինչպես Հանրապետության Նախագահի, այնպես էլ՝ Ազգային ժողովի և կառավարության լիազորությունները՝ ապահովելով իշխանության բոլոր ճյուղերի արդյունավետ գործունեությունը:

Այս համատեքստում, պետք է նշենք, որ անհրաժեշտ է լինելու հրաժարվել գործող Սահմանադրությամբ ամրագրված և Ընտրական օրենսգրքում մասնրամասնված Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի միաժամանակյա ընտրություններ անցկացնելուց: Օրենսդիր և գործադիր իշխանությունների բնականոն գործունեության ապահովման և հայեցակարգով նախատեսված առաջարկություններն իրացնելու նպատակով՝ անհրաժեշտ է լինելու մինչև գործող Սահմանադրության համաձայն ընտրված Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը կազմակերպել և անցկացնել արտահերթ համապետական ընտրություններ: Առաջարկվում է, հաշվի առնելով Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ներկայիս իրավիճակը, ինչպես նաև հանրային իշխանության մարմինների գործունեությանը չխոչընդոտելու նպատակով, համապետական ընտրություններն անցկացնել աստիճանաբար՝ 2023 թվականին համամասնական ընտրակարգով անցկացնելով խորհրդարանական, 2024 թվականին՝ նախագահական ընտրություններ: Միաժամանակ, առաջարկվում է ընտրական գործընթացների ճկունությունն ապահովելու նպատակով, բացառիկ դեպքերում Արցախի

Հանրապետության Ազգային ժողովին վերապահել Հանրապետության Նախագահ ընտրելու լիազորություն՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանելով այդ լիազորության իրականացման դեպքերը:

ԳԼՈՒԽ 3 ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրավական պետությունը ենթադրում է ուժեղ և անկախ դատական իշխանություն, որը նպաստում է սահմանադրական կարգի անսասանության, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, օրենքի նկատմամբ հարգանքի դաստիարակմանը: Դատական իշխանությունն առանձնակի տեղ է զբաղեցնում իշխանությունների բաժանման մեջ՝ լուծում տալով օրենսդիր և գործադիր իշխանությունների ինստիտուտների միջև հակասություններին:

Դատական իշխանությունն Արցախի Հանրապետությունում իրականացվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա՝ օրենքով ստեղծված անկախ և անաչառ դատարանների կողմից:

Ինչպես 2006 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, այնպես էլ 2017 թվականի Արցախի Հանրապետության Սահմանադրություններով ամրագրվել և այնուհետև ամրապնդվել է դատական իշխանության անկախությունը, ինքնուրույնությունը, ինչպես նաև դրա դիրքը պետական մարմինների համակարգում:

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային հիմնախնդիրներից մեկը դատական իշխանությանն առնչվող սահմանադրաիրավական կարգավորումների վերանայումն է, մասնավորապես,

1) կառավարման համակարգի վերափոխմամբ պայմանավորված՝ դատավորների պաշտոնում նշանակման և պաշտոնից ազատման ընթացակարգի վերանայումը՝ միաժամանակ ապահովելով այդ գործընթացի թափանցիկությունը,

2) դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի վերանայումը՝ Սահմանադրությամբ ամրագրելով պաշտոնավարման հստակ ժամկետ,

3) Գերագույն դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կարգի վերանայումը,

4) դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման և

գործունեության կարգի վերանայումը՝ հաշվի առնելով գործնականում առկա հիմնախնդիրները:

Դատական համակարգի արդյունավետ գործունեության, մասնավորապես, դատարանների կողմից իրականացվող արդարադատության արդյունավետության բարձրացման համար, անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել դատավորների նշանակման և լիազորությունների դադարեցման ընթացակարգին:

Գործող Սահմանադրության համաձայն՝ դատարանի նախագահները և դատավորները նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ (139-րդ հոդված): Ստացվում է, որ դատավորների նշանակման գործընթացին ներգրավված են օրենսդիր և դատական իշխանությունները: Հաշվի առնելով դատավորների նշանակման հետ կապված միջազգային հիմնարար փաստաթղթերում ամրագրված դրույթները և հիմք ընդունելով սույն հայեցակարգով առաջարկվող կառավարման համակարգի փոփոխությունը՝ առաջարկվում է Գերագույն դատարանի դատավորների նշանակման ընթացակարգը թողնել անփոփոխ, այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նշանակումը, Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, իրականացնել Հանրապետության Նախագահի կողմից: Այս կերպ կապահովվի օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների հավասարակշռված մասնակցությունը դատավորների նշանակման գործընթացին:

Գործող Սահմանադրությամբ դատավորի լիազորությունների դադարեցման, դատավորին ազատությունից զրկելու, նրա նկատմամբ կարգապահական վարույթ կամ քրեական հետապնդում հարուցելու իրավունքը վերապահված է բացառապես Բարձրագույն դատական խորհրդին: Հաշվի առնելով Գերագույն դատարանի դատավորների կողմից սահմանադրական արդարադատության իրականացման առաքելությունը՝ առաջարկվում է Գերագույն դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկել՝ հաշվի առնելով Գերագույն դատարանի եզրակացությունը: Միաժամանակ, առաջարկվում է,

Գերագույն դատարանի դատավորի նկատմամբ՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ քրեական հետապնդում հարուցել միայն Գերագույն դատարանի համաձայնությամբ:

Դատական համակարգի արդյունավետ գործունեությունը մեծապես կախված է դատական համակարգում դատավորների անկախությունից: Գործող իրավակարգավորումներով, դատարանների նախագահների համար պաշտոնավարման ժամկետի սահմանափակումներ նախատեսված չեն, թեև գործող Սահմանադրությամբ նախատեսված է Դատական օրենսգրքով դա իրացնելու հնարավորությունը:

Դատավորների համար առաջխաղացման հնարավորության ապահովումը դատական համակարգի արդյունավետ գործունեության կարևորագույն նախադրյալներից է: Այդ իսկ պատճառով սահմանադրական բարեփոխումների շրջանակներում դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի հետ կապված հարցի կանոնակարգումը կնպաստի դատավորների համար դատարանի նախագահի պաշտոնում նշանակվելու հնարավորության ավելացմանը:

Դատական իշխանության անկախության և ինքնուրույնության ապահովման համար կարևոր նշանակություն ունի դատական ինքնակառավարման մարմինների գործունե համակարգի առկայությունը: Այս առումով 2006 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ առանձնահատուկ տեղ էր հատկացվում Արդարադատության խորհրդին, որին 2017 թվականի Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ փոխարինելու եկավ Բարձրագույն դատական խորհուրդը: Թեև գործող Սահմանադրությամբ էականորեն ընդլայնվել են Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական լիազորությունները, նախատեսվել են Բարձրագույն դատական խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները, այդուհանդերձ, գործնականում առաջանում են այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ պատշաճ լուծել սահմանադրական առկա կարգավորումներով: Ուստի, առաջարկվում է, վերանայել Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման և գործունեության կարգը, մասնավորապես, սահմանելով, որ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է վեց անդամից: Ընդ որում, երեք անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը, իսկ մյուս երեք անդամները՝ նշանակվում են

համապատասխանաբար Հանրապետության Նախագահի, կառավարության և Ազգային ժողովի կողմից: Բարձրագույն դատական խորհրդի նախագահը Գերագույն դատարանի նախագահին է՝ խորհրդատվական ձայնի իրավունքով (առանց քվեարկության իրավունքի):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական իշխանության և դրա գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները կանոնակարգված են Դատական օրենսգրքով և «Սահմանադրական դատավարության մասին» օրենքով, առաջարկվում է վերոնշյալ օրենսդրական ակտերը դիտարկել որպես սահմանադրական օրենքներ: Միաժամանակ, առաջարկվում է, Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանել սահմանադրական օրենքների ցանկը: Խոսքն այն օրենքների մասին է, որոնք անմիջականորեն ազդում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, պետական իշխանության կազմակերպման վրա, որոնց ընդունման համար պահանջվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առվազն երեք հինգերորդը (որակյալ մեծամասնություն):

ԳԼՈՒԽ 4

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Արցախի Հանրապետության Սահմանադրության 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետության վարչատարածքային միավորներն են համայնքները: Միաժամանակ, գործող Սահմանադրության 173-րդ հոդվածը սահմանում է, որ մինչև վարչատարածքային բաժանման վերանայումը գործում է 2006 թվականի Սահմանադրության 104-րդ հոդվածը, որով կանոնակարգված են կառավարության տարածքային քաղաքականության իրագործման հետ կապված հարաբերությունները:

Գործող Սահմանադրությունը, միաժամանակ սահմանում է, որ վարչատարածքային բաժանման վերանայումը պետք է իրականացվի Սահմանադրությունն ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ տարում (173-րդ հոդվածի 2-րդ մաս), այսինքն մինչև 2022 թվականի մարտի 10-ը: 2022 թվականի մարտի 30-ին Ազգային ժողովի կողմից Արցախի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու արդյունքում այդ ժամկետը երկարաձգվեց ևս հինգ տարով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի պատճառով անհնարին դարձավ վարչատարածքային բարեփոխումների իրագործման՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ նախանշված նպատակների իրականացումը, մասնավորապես, որպես վարչատարածքային միավոր միայն համայնքները դիտարկելը, առաջարկվում է, որպես վարչատարածքային միավոր դիտարկել նաև *շրջանները*:

Միաժամանակ, առաջարկվում է Սահմանադրությամբ կարգավորել կառավարության տարածքային քաղաքականության իրագործման հետ կապված հարաբերությունները՝ ամրագրելով, որ *կառավարությունը շրջաններում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է շրջանների վարչակազմերի ղեկավարների միջոցով, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է կառավարությունը*:

Նման իրավակարգավորում ամրագրելու նպատակը կայանում է նրանում, որ Արցախի Հանրապետությունում պետական կառավարումն իրականացվում է երկու մակարդակներում՝ համապետական և տարածքային: Տարածքային կառավարումը և այդ գործառույթը իրականացնող մարմիններն առաջին հերթին պետական իշխանության միասնական համակարգի բաղկացուցիչ տարրերն են:

Որպես ելակետ ընդունելով այն, որ շրջաններում պետական կառավարումը պետք է իրականացվի համապետական և համայնքային շահերի ներդաշնակման, ինչպես նաև շրջանների վարչակազմերի ղեկավարների և համապետական գործադիր մարմինների ու վերջիններիս տարածքային ծառայությունների համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա՝ առաջարկվում է Սահմանադրությամբ ամրագրել, որ *շրջանների վարչակազմերի ղեկավարները համակարգում են պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի*: Առաջարկվում է նաև Սահմանադրությամբ ամրագրել, որ *շրջանների վարչակազմերի ղեկավարների լիազորությունները, նրանց հաշվետվողականության մանրամասները սահմանվում են օրենքով*:

ԳԼՈՒԽ 5

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Գործող Սահմանադրության համաձայն՝ Գլխավոր դատախազը՝ Հանրապետության Նախագահի, իսկ Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամները՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովների առաջարկությամբ ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն հայեցակարգով առաջարկվում է անցում կատարել կառավարման կիսանախագահական համակարգին՝ առաջարկվում է *Մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի նախագահի և մյուս անդամների թեկնածուների առաջադրման իրավունքը ևս վերապահել Հանրապետության Նախագահին:*

Արցախի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ունենալու դեպքում կարող եք զանգահարել (+374) 94-25-64 կամ (+374) 95-33-41 հեռախոսահամարներով, իսկ գրավոր առաջարկություններն ուղարկել Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովին՝ constcom@gov.nkr.am էլեկտրոնային հասցեով:

Հարգանքներով՝

Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի քարտուղարություն